

ՎՐԱՑ ԿԵՆՆ-ՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Վրաց մամուլի պրեմիաները:—Վրաց պատմական կեանքը և «Հասարակական գործիչ» դարձուածը:—Վրացի պրոֆեսսորի առանձնատնտեսական:—Վելիչկով մահը և հայերի «անարգարութիւնը»:

Վրաց պարբերական հրատարակութիւնների մէջն էլ մըտաւ պրէսիաներով բաժանորդներ որսալու սովորութիւնը: Այդ նորաձեւութիւնը գործ է դրուում մեր հարեանների մօտ ներկայ 1904 թ. առաջին անգամ և, չնայելով այդ հանգամանքին, սկսուել է արդէն տաք մրցում: Մօտիկ ապագան ցոյց կը տայ, իհարկէ, թէ վրացի պարբերական հրատարակութիւններից ո՞ր մէկի տունը կը շինի կամ ո՞ր միւսի տունը կը քանդի այդ «բրտակաւոր» մողան: Ընծանների թելը բացեց ամենից առաջ «Յնորիս-Փուրցելի»-ն իր նոյեմբեր ամսին հրատարակած յայտարարութեամբ: Պէտք է նախ և առաջ ասենք, որ այդ լրագիրը, որ արժէ ընդամենը 6 ռուբլի, տալիս էր ընթերցողներին՝ վերջին երկու տարուայ ընթացքում՝ շաբաթական եօթը թերթ (ուրեմն երկուշաբթի օրերն էլ) սովորական լրագիր բոլոր բաժիններով (հայերէն լրագրների մեծութեամբ) և շաբաթը երկու անգամ էլ առանձին պատկերազարդ յաւելուած՝ Իլլիւստրացիա (մեր «Տարազ»-ից մի քիչ փոքր դիւրով): Այդ յաւելուածի պատկերները, որ վերցնուում են Երոպական և վրաց կեանքից, լինում են շատ աջող ու շքեղ, ապագրուած ընտիր, հաստ թղթի վրայ: Պատկերների մի մասը ներկայացընում են ծաղրանկար և ունեն իրանց առանձին տեղը—չորրորդ երեսում: «Յնորիս-Փուրցելի»-ն, բացի այդ, անում էր նաև մի խոշոր զիջում իր այն բաժանորդների համար, որոնք կը կամենային ստանալ նաև «Մոամբէ» ամսագիրը. այդպիսիները այդ տասը ռուբլի արժեցող ամսագրի համար վճարում էին

միայն չորս բուբլի: Եղած դրութիւնը պահպանելով հանդերձ, յիշեալ լրագիրը ներկայ 1904 թւականի համար տալիս է իր բաժանորդներին իբրև պրեմիա ազգային նշանաւոր վիպասան (այժմ հանգուցեալ) Ա. Ղազըէզի բոլոր գրուածների ժողովածուն, որ վաճառոււմ էր մինչև այժմ 4 բուբուլց աւելի գնով, և չորս հատ էլ պատկերազարդ մանկական գրքեր, որ լոյս պէտք է տեսնեն 3 ամիսը մի անգամ:

Առատաձեռն լրագրի օրինակին հետեցին վրաց միւս հրատարակութիւնները՝

«Մոզաւուրի» (Ճանապարհորդ) ամսագիրը, որ արժէ տարեկան 5 բուբլի, և որի մասին մենք մանրամասն խօսել ենք «Մուրճ»-ի անցեալ տարուայ 7-րդ համարում, խոստանում է իր բաժանորդներին 1) Վրաց նշանաւոր բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու մեծադիր լուսանկարչական պատկերը, 2) «Աշխարհը պատկերներում»—մօտ 150, ամբողջ աշխարհի այլևայլ տեսարաններ ու երևոյթներ պարունակուող պատկերների ալբոմ. լոյս կը տեսնէ մաս-մաս. 3) «Համայն Վրաստանի աշխարհագրութիւնը»—հեղինակութիւն արքայազն Վախուշտի. 4) Բժշկական և առողջապահական գիտելիքների ժողովածու և 5) Տնտեսութեան և ընտանիքին վերաբերեալ գիտելիքների ժողովածու:

«Միվերիա» լրագիրը տալիս է 1. Տոլստոյի «Յարութիւն» վէպի և դրամատուրգ Ա. Սումբատովի «Դաւաճանութիւն» դրամայի թարգմանութիւնները: Բացի այդ՝ իր տասը բուբլի բաժանորդազնից զեղչում է արհեստաւորների, գիւղական ուսուցիչների և ուսանողների համար ամբողջ 5 բուբլի (Թիֆլիսից դուրս՝ 3 բուբլի):

«Մժղեմսի» (Հովիւ) կրօնական ամսագիրը, որ հրատարակոււմ է Գութայիսի նահանգի Ղվիրիլի գիւղաքաղաքում, խոստանում է տալ «Առողջապահական թերթ» անունով մի ամսօրեայ յաւելուած:

Վերջապէս մանկական ամսագիր «Ջէջիլի»-ն (Արտ) էլ տալիս է իբրև ընծայ իր փոքրիկ բաժանորդներին պատկերազարդ հեքիաթների հաւաքածու...

Վրաց հրատարակութիւնների իրար դէմ մղած այդ շուտափոյթ և տագնապալից մրցումից բոլորովին հեռու պահեց իրան «Կիւլի» շաբաթաթերթը, որ լոյս է տեսնում կիրակի օրերը, արժէ տարեկան 7 բուբլի և ունի իր համար որոշ ճաշակի տէր բաժանորդների մի կոնտինգենտ:

Այդպիսով անա մեր հարեանների մամուլի կեանքում ըսկոււմ է մի նոր երևոյթ: Այդ մամուլի էջերում յաճախ կարելի

է կարգալ, որ հասարակութիւնը շատ անտարբեր է վերաբերում գէպի նա, չէ գրում բաւականաչափ թւով բաժանորդ, և որ այդ վերջիններից ստացած փողը հազիւ է բաւականանում հրատարակութեան թղթի ու մրի գինը հանելու... Պրեմիաներ ստանալը, ինչ ասել կ'ուզի, բաժանորդների համար շատ հաճելի բան է, բայց այդ առատաձեռնութիւնը պէտք է կատարուի նախ այն պայմանով, որ չխանգարի բուն հրատարակութեան, լրագրի կամ ամսագրի, բովանդակութեան ճոխանայուն և երկրորդ՝ նա չանանկացնի հրատարակիչներին...

Առհասարակ նկատելի է մի ընդհանուր ճիգ վերջին ժամանակներս՝ վրաց պարբերական հրատարակութիւնները՝ առաջ գնալու, կատարելագործելու, ընթերցողներին աւելի գրաւելու համար: Նկատուում է նոր եռանդ, նոր աւիւն...

Ամբողջ դեկտեմբեր ամսի ընթացքում մի խիստ և ոգևորուած բանակուի էր մղւում վրաց լրագիրներում մեր հարեանների անցեալի և հասարակական գործիչ՝ դարձուածի առիթով: Նոյեմբեր ամսին վերսկսեց հրատարակուել 4 ամսուայ ընդհատումից յետոյ՝ «Կվալի» (Ակու) շաբաթաթերթը, որի գլխաւոր աշխատակից պ. Ղվիրիլին յայտնում էր այն կարծիքը (№ 28), թէ պէտք է աշխատել վրաց թատրոնում ներկայացրնել որոշ իդէալներ պարունակող պիեսներ՝ օգտուելով ժամանակակից եւրոպական հարուստ ընպերտուարից: Հասարակութեան մի նշանաւոր մասի աչքերը, — ասում է պ. Ղվիրիլին — ուղղուած են դէպի փայլուն ապագան, այն ապագան, որտեղ վերջացած կը լինեն ամեն անկանոնութիւն ու բռնութիւն, և որտեղ տեղի չեն ունենայ կեղեքում ու հարստահարութիւն: Վրացի մարդու համար շատ քիչ միլիթարական բան կայ իր հայրենիքի՝ ճորտութեան տակը հեծող՝ անցեալում, «որից նա զգւում է ինչպէս օձից», նա չէ սիրում նոյնպէս իր ներկան, այլ «ասում է նրան, ինչպէս ժանտախտը»: Այդ պատճառով «Կվալի»-ի դեկավարը խորհուրդ է տալիս հեռացնելու վրաց թատրոնի բեմից մի շարք մաշուած պատմական պիեսները և փոխարինելու նրանց երոպական այնպիսի գրուածներով, որոնք մօտ են ապագայի, մարդկայնութեան լայն իդէալին:

Պ. Ղվիրիլու այդ ճնոր խօսքը՝ ահագին դղրդոց հանեց միաժամանակ թէ պահպանողական «Իվերիայի» և թէ առաջադիմական «Ճնորիս-Փուրցելի»-ի բանակներում: Բողբովին մի կողմ թողնելով վրաց հասարակութեան այն ճշմանաւոր մասը, որի անունից, իսկապէս, խօսում էր «Կվալին», նրա հակառակորդները փրփուրը բերանին միշտ բղաւում էին՝ «Ինչպէս թէ «Կվալին» զգւում է մեր անցեալից, ինչպէս օձից», «Ինչպէս թէ

Ղվիրբլուն ժանտախտի նման ատելի է երևում մեր ներկանս... Յօղուածներ էր, որ գրւում էին, Ֆելիտոններ էր, որ շարւում էին, սրախօսութիւններ էր, որ անւում էին: Այդ կողմից մանաւանդ համը տարաւ (ինչպէս ամեն բանի մէջ) Վիվերիանս, որ կատարելապէս մատի փաթաթան շինեց «մեր անցեալը օձ է, ներկան ժանտախտ է» խօսքերը և հղովում և խոնարհում էր նրանց բոլոր եղանակներով ու ժամանակներով...

Իսկ «Կվալին» իր սովորական լրջութեամբ նրանց պատասխանում էր (№ 30). «Վրաստանի ամբողջ անցեալ կեանքի ընթացքում ոչ մի անգամ երջանկութեան ու խաղաղութեան շողքը չթափանցեց (ճորտութեան պատճառով) ժողովրդի սիրտը: Եւ եթէ այդ ժողովրդի ամբողջ կացութիւնը՝ ոտից մինչև գլուխ՝ հիմնուած էր ճորտութեան ու պարոնութեան վրայ, եթէ ազգի մեծամասնութիւնը հեծում էր միալար կամ արտաքին և կամ հայրենի բռնաւորների (կալուածատէրերի, ПОМЪ-ШУКЪ-ների) լծի տակ,—միթէ ուրեմն իրաւունք չէ տրւում նրանց, որոնք մի «բէլալական սիրով» սիրում են այդ ժողովրդին՝ ասել այն, ինչ որ մենք ենք ասել: Այո, մենք ատում ենք այդ անցած կեանքը»...

Դառնանք վրաց երեք թերթերի ջերմ վէճի երկրորդ առարկային:

Վերջին ժամանակներս «Ծնորդիս-Փոլըցելի»-ում յաճախ յօղուածներ է տպւում քաղաքատնտեսութեան այլևայլ նիւթերի մասին լայացիզում ուսում առած՝ վիճակագրութեան դոկտոր՝ երիտասարդ պ. Փ. Գոգիչայիշվիլին: Իր գրուածներին մէկում նա ջերմ ցանկութիւն էր յայտնում, որ վրաց մէջ պսակների թիւը շատանայ, որպէսզի ազգն աւելի աճի և իր մէջ «քաղաքակրթութիւն տարածելուն աւելի զարկ տայ»: Նա զարմանք էր յայտնում, թէ ինչպէս շատ երիտասարդներ արդարացնում են իրանց ամուրիութիւնը «հասարակական գործիչ» դառնալու պատրուակով, մինչդեռ ինքը պ. Գոգիչայիշվիլին այն կարծիքի է, որ «պսակուելը և հայրենի աշխարհին նոր զաւակներ տալը հասարակական գործունէութեան ոչ մէկ տեսակից պակաս չէ»...

Ահա այստեղ հանդէս եկաւ իր գօրեղ փաստերով այդ նորերուկ «գիտնականի» դէմ «Կվալի» շաբաթաթերթը, որ, կարելի է ասել, քաղաքատնտեսութեան և հասարակական գիտութիւնների մի ժողովրդականացրած օրդան է: Նա ապացուցանում էր, որ պսակի քարոզը պարապ բան է այն ժամանակ, երբ գոյութիւն չունեն նրան ապահովացնող տնտեսական պայմանները, որ մի ազգի լոկ քնութիւնը կամ շատութիւնը մի

առանձին նշանակութիւն չունի քաղաքակրթութիւնը զարգացընելու հարցում (մեզ օրինակ Զինաստանը և Շվէյցարիան), և որ, վերջապէս, ծիծաղելի է և ամօթալի՝ երեխաներ լոյս աշխարհ բերող և բուսական կեանքով ապրող մարդկանց նշանաւոր հասարակական գործիչներ անուանել...

Տեղաց երկու կողմիցն էլ յօդուածները նոր տարափ, նոր բացատրութիւններ, նոր լուսարանութիւններ... Դէպքից օգտուեց նաև «Իվերիան», խոնոուեց կուրի մէջ և բացեց իր տափակ սրախօսութիւնների տոպրակը... Թէև այդ հանաքների մէջ կան նաև մի քանի յաջողուածներ: Օրինակ, մի յօդուածագիր գրում էր, թէ ինքը երազումը այցելութեան գնալով պ. Գոգիչայիշվիլուն, տեսաւ նրա ձեռքում բոլոր վրացի պսակուած մարդկանց և կանանց ցուցակը. դոկտորը զբաղուած էր այդ բախտաւորներին «հասարակական գործիչ» դիպլոմներ բաժանելով... Մի ուրիշը գրում է, թէ նա անհամբեր սպասում է «Լայպցիգի վիճակագրագէտի» այն մանիֆեստին, որով իրանց կեանքումը մէկ անգամի փոխարէն մի քանի անգամ պըսակուածները (այբիանալուց յետոյ) մի քանի աստիճանով աւելի բարձր տիտղոսի կ'արժանանան, քան «սովորական» հասարակական գործիչները... Նոյնիսկ «Կիվալիի» մէջ տպագրուեցին մի քանի վերին աստիճանի ամազալու նամակներ՝ դիւրացիների կողմից գրուած...

Մի խօսքով, պ. Գոգիչայիշվիլու շնորհիւ այսօր ամբողջ վրաց հասարակութեան բերանում մի անմեղ ծաղրի առարկայ է դարձել «հասարակական գործիչ» դարձուածը...

Թէ «Իվերիա» լրագրում և թէ վրացերէն առանձին գրքայիններում յաճախ կարելի է հանդիպել խիստ դժգոհութիւնների և վիրաւորական յարձակումների՝ արտայայտուած պրոֆեսսոր Մարբի մի շարք լուրջ ուռնիստիքութիւնների և համարձակ, անկախ կարծիքների առիթով: Այդ՝ մօր կողմից վրացի և հօր կողմից անպիտացի դիտնականը արժանանում է սովորաբար վերոյիշեալ գրուածներում «հայացած վրացի» ծաղրական տիտղոսին: Նորերս «Իվերիան» տպեց մինչև իսկ մի ամբողջ յօդուած (№ 3—յունուարի 4), նուիրուած պ. Մարբի «բռնած դիրքի» քննադատութեան: Յօդուածը կրում է «Վրացի պրոֆեսսորի առանձնասենեակում» խորհրդաւոր վերնագիրը և պատկանում է ոմն Գաղթականի գրչին: Յայտնի հայագէտին այցելութեան գնացած պարոնն ասում է. «Մարդս ապշում է՝ տեսնելով պրոֆեսսորի առանձնասենեակի և միւս սեփանսար, 1904.

նեակները սարք ու կարգը. հէնց առաջին պատին կախուած է «Հայրիկի» (Խրիմեանի) մեծ պատկերը, մի քիչ այն կողմը — այլևայլ անձերինը (հայ), վերևը, յետին պատի վրայ, սեղանի վրայ — ամեն տեղ նկարուած են Արմենիայի վերաբերեալ պատկերներ: Զարմանում ես ու հարցնում ինքդ քեզ. արդե՞ք մի հիւսիսային քաղաքումն եմ ես, թէ Երևանի գաւառի «Մշակականերով» բնակեցրած մի գիւղում...:

Թղթակցի զարմանքը պրոֆեսսորն էլ նկատելով՝ հանում է սեղանի մի երկու դարակից մի բուռն նամակներ, զցումնւրա առաջը և աւելացնում. «Ա՛յ, կարդացէք, տեսէք, թէ որքան դժգոհ են ինձանից վրացիք. ինչքան են ինձ հայհոյում. էլ հանգստութիւն չեն տալիս: Եւ ինչո՞ւ այդ բոլորը: — Ասում են, թէ ինչո՞ւ ես հայերէն ուովորում, ինչո՞ւ ես հայերին պաշտպանում, ինչո՞ւ ես վրացութիւնդ ուրանում, չէ՞ որ վրացու կաթ ես կերել» կայն... Պ. Գաղթականն էլ իր կողմից թւում է պրոֆեսսորի երեսին նրա գործած «մեղքերի» մի երկար շարք, աշխատում է յապցուցանել, որ նա անպայման կերպով հայերի կոյր բարեկամն է, և ապա վերջացնում իր այցելութիւնը հետեւեալ խօսքերով. «Մնաք բարեաւ. ներեցէք, որ նեղութիւն տուի ձեզ: Լուրերին չէի հաւատում, բայց հիմա համոզուեցայ, որ եկել եմ «Մշակ»-ական դարձածի բնակարանը»...

Ուշադրութեան արժանի է, որ յօդուածագիրը չէ բերում ամենևին այն խօսքերը կամ բացատրութիւնները, որ նրան տուած պէտք է լինի, հաւանականօրէն, պ. Մարրը: Բայց որ այդ խօսքերը պ. Գաղթականի համար պէտք է անհաճելի եղած լինեն, այդ երևում է նրա գրուածքի հետեւեալ վերջաբանից. «Աւելի լաւ է մաղով ծովի ջուրը հատացնելը, քան իր ազգութիւնը թողած վրացու հետ խօսակցելը»...

Գեղեմեաբերի 31-ին Պետերբուրգում վախճանուեց, ինչպէս յայտնի է, «պլեւրիտ» հիւանդութիւնից «ВАНЕАВЪ»-ի նախկին խմբագիր և ամբողջ աշխարհի հայերին ծանօթ ծանօթ Վ. Լ. Վելիչկօն: Ո՞վ կարող էր մտածել, թէ «իվերիան» օգուտ կը քաղի նոյնիսկ այդ դէպքից, որպէսզի մի նոր յարձակում գործէ հայ ինտելլիգենցիայի վրայ... Հանգուցեալի յիշատակին նուիրած առաջնորդող յօդուածում լրագիրը այսպէս է ձևակերպում, ի միջի այլոց, նրա ունեցած երախտիքը վրաց ազգի վրայ. «Հանգուցեալ Վելիչկօն համարեան միակ ուսուցանաւոր գրողն էր, որ զնահատեց վրաց հաւատարմութիւնը, ցաւեց մեր տնտեսական անկման վրայ, սիրեց մեր լեզուն և շատ արտա-

սուր թափեց, երբ տեսաւ, թէ որ աստիճան թուլացել է քրիստոնէական հաւատը այն երկրում, որտեղ նա ծաղկում էր 16 դարերի ընթացքում: Ի՞նչպէս կարելի էր, որ վրացիք չուրախանային այսպիսի մի մարդու մեր աշխարհ գալովը: Ի՞նչպէս կարելի էր, որ նրանք շնորհակալ չլինէին նրանից, քանի որ այդ մարդը երեք-չորս տարի շարունակ բոլոր իշխանաւորներին ականջին հալեցնում էր, թէ վրացիք ուսանելին դաւաճանող ազգ չեն, թէ վրաց լեզուն և վրաց հաւատը ամեն կողմից հովանաւորութեան և ոչ թէ ջնջուելու արժանի են, ինչպէս որ այդ քարոզում էին «Моее. Вѣд.», «Нов. Время» և ուրիշ դրանց նման լրագրները»:

Մի շարք դրա նման գովեստներ տալուց յետոյ խմբագրական յօդուած գրողը անցնում է հայերին: Նա համաձայն է, որ Վելիչկօն չափազանց խիստ էր գրում հայերի մասին, բայց «չմոռանանք,—աւելացնում է նա—որ ինքը հայ ինտելիգենցիան էլ Ռուսաստանում չափազանց անարդար կերպով էր վարւում հանգուցեալի հետ, և այդ մ'իմ'իայն այն պատճառով, որ նա գովում էր վրացիներին: Այս անարդարութիւնը ուղիղ մեր սովորական նախանձն էր»:

Այդ երեկելի գաղտնիքն իմանալուց յետոյ այժմ լսենք, ընթերցող, «Իվերիայի» մի ուրիշ լուսաբանութիւնն էլ: Նրա կարծիքով, հայերը վաղուց ի վեր վարժուել են, որ Կովկաս եկող ամեն մի ուսու կամ կրօնագի անպատճառ գովէ հայերին, գովէ ու փառաբանէ նրանց լեզուն ու կուլտուրան, իսկ այդպէս չվարուողը հռչակուած է հայութեան թշնամի... «Թիֆլիսի հայերը,—շարունակում է լրագիրը—մինչև իսկ չսպասեցին, որ հանգուցեալը լրիւ յայտնէր իր կարծիքը իրանց մասին, այլ շտապով գրոհ տուին նրա վրայ իրանց լրագրներում»:

Այդ հայ լրագրների շարքում «Իվերիան» ընդունում է նաև «Нов. Обзорѣіе»-ն և «Тифл. Листокъ»-ը:

Պակաս հետաքրքրական չէ նոյնպէս յօդուածի վերջաբանը. «Ո՞վ գիտէ,—ասուած է այնտեղ—թէ ինչ կ'անէր մի ուրիշը Վելիչկօի տեղ. գուցէ նա այնքան վախճնար հայերի յարձակումներից, որ իր կարծիքը փոխէր և սկսէր գովել ու փառաբանել հայերին: Բայց հէնց նրանով էր ուժեղ հանգուցեալը, որ նրան ոչ մի բանով կաշառել չէր կարելի»...

Ասած է՝ «Մեռելի վրայ կամ լաւ, կամ ոչինչ», ուստի մեզ մնում է միայն յանձնարարել վերևը բերուած հատուածները մեր ընթերցողների ուշադրութեանը...